Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Սերգեյ Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն), 2018 թվական, հոկտեմբերի 8-10

4. Հրավիրող կողմը.

Երևանում բրիտանական դեսպանատուն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն հոգեկան առողջության գլոբալ նախարարական գագաթնաժողովին:

Վերջինս նպատակ ուներ ընդգծելու առաջիկա տարիներին հոգեկան հիվանդությունների կանխարգելմանն ու բուժմանն ուղղված միջոցառումների կարևորությունը:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, նախարարներ, համաշխարհային առաջատար փորձագետներ:

Հանդիպման մասնակիցները քննարկեցին հիվանդության դեմ գլոբալ պայքարի առաջընթացն, ինչպես նաև վերջինիս կանխարգելմանն ու բուժմանն ուղղված հետագա գործողությունները, որոնք կհանգեցնեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության հոգեկան առողջության 2013-2020թթ. գործողությունների համընդհանուր ծրագրի նպատակների իրականացմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հոգեկան առողջության վերաբերյալ ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանը: Ներկայացվեցին նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցած հաջողություններն ու հետագա քայլերը:

Եղել են մի շարք երկկող հանդիպումներ, որոնց ընթացքում ընդգծվել է հոգեկան առողջության բնագավառում գլոբալ մարտահրավերների դեմ պայքարի նպատակով երկրների փոխհամաձայնեցված գործողությունների իրականացման անհրաժեշտությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովին ներկայացվեց տարբեր երկրների դրական փորձը, միջազգային փորձագետների, հեղինակավոր մասնագետների կարծիքներն ու առաջարկները հոգեկան առողջության կանխարգելման և բուժման ուղղությամբ, ինչպես նաև վերջիններիս արդյունավետ կիրառման եղանակները: Տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները, որոնք կնպաստեն միմյանց բնակչությունների առողջության բարելավմանը և բարեկեցությանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով համատեղել երկրների ջանքերը և ակտիվացնել փոխգործակցությունը հոգեկան հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

15 հոկտեմբերի 2018թ.